ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 1, 2013 *Геология и география*

ՃԱՆԱՉՎԱԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ռուբենի Բոյնագրյանի ծննդյան 75 ամյակի առթիվ)

Լրացավ ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ռուբենի Բոյնագրյանի 75 ամյակը:

Վ.Ռ. Բոյնագրյանի աշխատանքային գործունեությունը հիմնականում կապված է եղել Երևանի պետական համալսարանի հետ, որտեղ նա երկար ճանապարհ է անցել՝ ավագ դասախոսից մինչև ամբիոնի վարիչ:

1962թ. գերազանցությամբ ավարտել է Մոսկվայի պետ. համալսարանը ստանալով գեոմորֆոլոգ որակավորումը, 1962–1966թթ. Վ.Ռ. Բոյնագրյանն աշխատել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի օվկիանոսագիտության ինստիտուտի Ատլանտյան բաժնում՝ որպես արշավախմբի և լաբորատորիայի ղեկավար: 1967–1969թթ. ուսանել է Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրայում: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո նա հրավիրվել է ԵՊՀ:

1996թ. Վ.Ռ. Բոյնագրյանի պաշտպանած է դոկտորական թեզը նվիրված է Հայկական լեռնաշխարհի լանջերի և լանջային երևույթների ուսումնասիրմանը: Աշխատանքը հրատարակվել է մենագրության տեսքով և արժանացել բնագավառի առաջատար գիտնականների բարձր գնահատականին: Պրոֆեսոր Վ.Ռ. Բոյնագրյանը 1997 թվականից ղեկավարում է Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնը:

Նա հեղինակ է 200-ից ավելի գիտական աշխատանքների, այդ թվում՝ 8 մենագրության և 3 ուսումնական ձեռնարկների, որոնց զգալի մասը հրատարակվել են նախկին ԽՍՀՄ, ինչպես նաև արտասահմանյան առաջատար ամսագրերում: Ուշագրավ է "Ցրոնները և դրանց միներալները" ձեռնարկը, որտեղ օգտագործվել են Բալթիկ ծովի արևելյան ափերում և Պատոմի սարահարթում հեղինակի կողմից ցրոնների ուսումնասիրման աշխատանքների արդյունքները: Հեղինակ է հանրապետությունում առաջին ռուսերեն–հայերեն–անգլերեն ֆիզիկական աշխարհագրության տերմինների բառարանի (5000 տերմին 2010թ.):

Մեծ է գիտնականի ավանդը Հայկական լեռնաշխարհի լանջերի և լանջային երևույթների ուսումնասիրման, Հայաստանի պլիոցեն-չորրորդական փխրուն նստվածքների, արտածին ռելիեֆ առաջացնող երևույթների, մասնավորապես սողանքների ուսումնասիրման գործում:

Տարբեր տարիներին գիտական հետազոտություններ է կատարել Ուստյուրտ և Պատոմ սարահարթերում, Թայմիրում, Միջին Ասիայում, Կամչատկայում, Բայկալ, Բալխաշ, Իսիկ Կուլ լճերի ափերին, Պամիրի և Տյան Շանի լեռներում:

Պրոֆեսոր Վ.Ռ. Բոյնագրյանը պարգևատրվել է ԵՊՀ արծաթե (1994) և ոսկե (2009) մեդալներով:

Վ.Ռ. Բոյնագրյանը 1999թ. ԵՊՀ "Գիտական տեղեկագիր" հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է, 2009-ից՝ հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, ՀՀ ԱԻՆ գիտական խորհրդի, "Hydrology Science and Technology" միջազգային ամսագրի խորհրդատվական խորհրդի անդամ է: Անդամակցում է նաև ՌԴ սելավային հանձնաժողովին, JAHS, ԳԱՄԱ միջազգային կազմակերպություններին:

Ցանկանանք բազմավաստակ գիտնականին՝ Վլադիմիր Ռուբենի Բոյնագրյանին երկար տարիների կյանք, քաջ առողջություն և բեղմնավոր աշխատանք:

ԵՊՀ ռեկտորատ,
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ,
ԵՊՀ "Գիտական տեղեկագիր" հանդեսի խմբագրություն